ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 4, հեռ.՝ (+374 60) 830 840, (+374 60) 830 850
Էլ-փոստ՝ info@competition.am, վեբ կայք՝ http://www.competition.am

«21» 05 2026թ.
No 006391

«ԿՎԱԴՐԱ-ԻՄՊԵՔՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՊԱՐՈՆ ԴԱՎԻԹ ՄԱՆՎԵԼՅԱՆԻՆ
(հասցե՝ ք.Երևան, Արաբկիր, Ն. Տիգրանյան 1 փակ., շ 3, 0014,
էլ. փոստի հասցե՝ kvadra-impex@mail.ru)

Հարգելի՛ պարոն Մանվելյան,

Կից ուղարկվում է Մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովի 2026 թվականի մայիսի 19-ի ««Կվադրա-իմպեքս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված միջնորդությունը բավարարելու և արագացված վարույթ կիրառելու մասին» թիվ 169-Ա որոշման պատճենը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Հանձնաժողով փաստաթղթեր ներկայացնել և ստանալ, ինչպես նաև Հանձնաժողովի հետ հետագա ողջ հաղորդակցությունը կարող եք իրականացնել նաև առցանց՝ Հանձնաժողովի e-Compete էլեկտրոնային համակարգի (այսուհետ նաև՝ Համակարգ) միջոցով, որի համար անհրաժեշտ է գրանցվել համակարգում՝ մուտք գործելով Հանձնաժողովի պաշտոնական կայքի (www.competition.am) «Իմ էջը» բաժին, ընտրելով «Գրանցվել» հրամանը և լրացնելով անձի նույնականացման համար պահանջվող տվյալները:

Առդիր՝ «5» թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՓՈԽԱՐԻՆՈՂ **ԴԱՎԻԹ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Կատարող՝ Շուշանիկ Ղազարյան
Սպառողների շահերի պաշտպանության վարչություն
Հեռ. (+374 60) 830-840 (271)

www.competition.am կայքում հրապարակման օրը՝ 2 հունիսի 2026 թվական:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 մայիսի 2026 թվականի թիվ 169-Ա

ԹԻՎ ՀԳ-01943/26 ՎԱՐՈՒՅԹՈՎ ՊԱՏԱՍԽԱՆՈՂ «ԿՎԱԴՐԱ-ԻՄՊԵՔՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՎԱՐԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՐԱԳԱՑՎԱԾ ՎԱՐՈՒՅԹ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) 2026 թվականի մայիսի 19-ի նիստում, քննարկելով թիվ ՀԳ-01943/26 վարույթով պատասխանող «Կվադրա-Իմպեքս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ **Ընկերություն**) կողմից ներկայացված արագացված վարույթ կիրառելու մասին միջնորդությունը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Հանձնաժողովի 2026 թվականի ապրիլի 7-ի ««Կվադրա-Իմպեքս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից սպառողների շահերի դեմ ուղղված իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին» թիվ 126-Ա որոշմամբ (այսուհետ նաև՝ **թիվ 126-Ա որոշում**) հարուցվել է թիվ ՀԳ-01943/26 վարույթը (այսուհետ նաև՝ **Վարույթ**):

Վարույթը հարուցվել է Ընկերության վարքագծում անարդար առևտրային գործելակերպի և ագրեսիվ առևտրային գործելակերպի դրսևորումներով սպառողների շահերը խախտող գործելակերպի հատկանիշների առերևույթ առկայության հիմքով:

Ընկերությունը թիվ 126-Ա որոշումը ստացել է 2026 թվականի ապրիլի 14-ին և խնդրել է Վարույթի վերաբերյալ պատշաճ դիրքորոշում ներկայացնելու համար տրամադրել լրացուցիչ երկշաբաթյա ժամկետ:

Հանձնաժողովի նախագահի 2026 թվականի ապրիլի 16-ի թիվ 004885 գրությամբ Հանձնաժողովը Ընկերությանը տեղեկացրել է, որ Վարույթում քննարկվող հարցերի վերաբերյալ գրավոր դիրքորոշում և այն հիմնավորող նյութեր կարող է ներկայացնել մինչև 2026 թվականի մայիսի 13-ը ներառյալ:

Ընկերությունը 2026 թվականի մայիսի 12-ին ներկայացրել է գրություն, ի թիվս այլնի, հայտնելով, որ ընդունում է Վարույթով իրեն վերագրվող իրավախախտումները, ինչի կապակցությամբ ձեռնարկել է միջոցներ դրանք վերացնելու համար: Մասնավորապես՝ փոխվել են վաճառակետերում գնապիտակները և տարայի վրա գրվածքները, ինչպես նաև հեռացվել են Ընկերության կայքէջից և սոցիալական ցանցերի էջերից բոլոր հրապարակումները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Ընկերությունը միջնորդել է կիրառել արագացված վարույթ (այսուհետ նաև՝ **Միջնորդություն**):

«Տնտեսական մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ **Օրենք**) 91.1-րդ հոդվածի համաձայն՝ սպառողների շահերի դեմ ուղղված իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացվում է սույն օրենքով տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթի իրականացման կարգով՝ սույն գլխով սահմանված հատուկ կանոնների պահպանմամբ:

Օրենքի 88-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին որոշումն ստանալու օրվանից երկշաբաթյա ժամկետում, իսկ սույն օրենքի 64-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետի երկարաձգման դեպքում երկարաձգված ժամկետում վարույթով պատասխանողը իրեն վերագրվող իրավախախտման հետևանքները վերացրած լինելու և իրավախախտման փաստն ընդունելու, իսկ սույն օրենքի 73-րդ հոդվածով նախատեսված դեպքում միայն իրավախախտման փաստն ընդունելու դեպքում կարող է արագացված վարույթ կիրառելու մասին միջնորդություն ներկայացնել Հանձնաժողով: Այն դեպքում, երբ իրավախախտման հետևանքները վերացնելն անհնար է, իրավախախտման հետևանքները վերացված լինելու պայմանը իրավախախտման փաստի ընդունման դեպքում համարվում է առկա:

Օրենքի 88-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արագացված վարույթ կիրառելու մասին միջնորդություն ներկայացվելու դեպքում վարույթով պատասխանողը չի կարող հետագայում հերքել իր կողմից իրավախախտում կատարելու փաստը:

Օրենքի 88-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ արագացված վարույթի կիրառման արդյունքում պատասխանատվության միջոց կիրառելիս պատասխանատվության միջոցը չի կարող գերազանցել տվյալ իրավախախտման համար նախատեսված ամենախիստ պատասխանատվության միջոցի մեկ երկրորդը:

Վերոգրյալ նորմերի համակարգային վերլուծությունից հետևում է.

1. օրենսդիրը նախատեսել է արագացված վարույթի ինստիտուտ, որի առավելությունը տնտեսավարող սուբյեկտի համար հիմնականում դրսևորվում է նրան վերագրվող իրավախախտման համար նախատեսված ամենախիստ պատասխանատվության միջոցի առավելագույնը մեկ երկրորդի կիրառման թույլատրելիությամբ,

2. արագացված վարույթը կիրառվում է, եթե

1) վարույթով պատասխանողը ներկայացրել է արագացված վարույթ կիրառելու մասին միջնորդություն,

2) միջնորդությունը ներկայացվել է տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթը հարուցելու մասին որոշումը ստանալու օրվանից երկշաբաթյա ժամկետում,

3) վարույթով պատասխանողն ընդունել է իրեն վերագրվող իրավախախտման փաստը,

4) վարույթով պատասխանողը վերացրել է իրավախախտման հետևանքները, բացառությամբ Օրենքի 73-րդ հոդվածով նախատեսված դեպքի և այն դեպքում, երբ իրավախախտման հետևանքները վերացնելն անհնար է,

3. արագացված վարույթ կիրառելու մասին միջնորդություն ներկայացրած վարույթով պատասխանողը չի կարող հետագայում հերքել իր կողմից իրավախախտում կատարելու փաստը:

Հանձնաժողովը հարկ է համարում անդրադառնալ արագացված վարույթ կիրառելու համար անհրաժեշտ «իրավախախտման հետևանքների վերացված լինելու» պայմանի բովանդակությանը: Այսպես, իրավախախտման հետևանքները, ըստ էության, իրավախախտման արդյունքում օբյեկտիվ իրականությունում տեղի ունեցող բացասական փոփոխություններն են: Ընդ որում, իրավախախտման հետևանքների վերացված լինելու պայմանի պահպանված լինելու հանգամանքը գնահատելիս պետք է հաշվի առնել նաև իրավախախտման ավարտված լինելու փաստը: Մասնավորապես, եթե իրավախախտումն արդեն իսկ ավարտված է, ապա դրա հետևանքները, ըստ էության, որոշ դեպքերում կարող են լինել անդառնալի և (կամ) անփոփոխելի, և, ըստ այդմ, դրանք վերացնելը գործնականում կարող է անհնար լինել: Այդպիսի պարագայում արագացված վարույթ կիրառելու քննարկվող պայմանն անիրագործելի է դառնում, ուստի Հանձնաժողովը գտնում է, որ նման դեպքերում իրավախախտման հետևանքները վերացված լինելու պայմանը համարվում է առկա:

Ինչ վերաբերում է այն իրավախախտումներին, որոնք դեռևս շարունակվում են և ավարտված չեն, ապա իրավախախտման հետևանքների վերացումը՝ իրավախախտման արդյունքում առաջացող բացասական փոփոխությունների խափանումն է՝ այլ կերպ ասած դրա դադարեցումը:

Միևնույն ժամանակ, Հանձնաժողովն արձանագրում է, որ որոշ իրավախախտումների հետևանքների վերացումը բովանդակային ու ծավալային առումով ենթադրում է մի շարք գործողությունների իրականացում, որը ոչ միշտ է հնարավոր ապահովել արագացված վարույթ կիրառելու մասին միջնորդություն ներկայացնելու համար օրենքով սահմանված երկշաբաթյա ժամկետում: Այս տեսանկյունից իրավախախտման հետևանքների վերացման պայմանը պետք է պահպանված համարել նաև այն դեպքում, երբ տնտեսավարող սուբյեկտը դրսևորում է իրավախախտումների դադարեցմանն ուղղված պատշաճ վարքագիծ, որը յուրաքանչյուր դեպքում ենթակա է գնահատման Հանձնաժողովի կողմից:

Իրավախախտման հետևանքները վերացնելու պայմանի բովանդակության վերաբերյալ այլ մեկնաբանության պայմաններում արագացված վարույթի ինստիտուտը, ըստ էության, կիմաստազրկվի և կդառնա անարդյունավետ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձինք պատասխանատվություն են կրում վարչական մարմիններին կեղծ տվյալներ, տեղեկություններ ներկայացնելու համար:

Վարչական վարույթով ապացույց կամ բացատրություն կեղծելու, փոխելու, ոչնչացնելու կամ թաքցնելու կամ կեղծ ապացույց ներկայացնելու, իսկ վարչական վարույթով սուտ բացատրություն կամ սուտ ցուցմունք տալու համար ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխանաբար 479-րդ և 504-րդ հոդվածներով սահմանված է քրեական պատասխանատվություն:

Վկայակոչված դրույթից հետևում է, որ իրավախախտման հետևանքները վերացված լինելու վերաբերյալ վարույթով պատասխանողի կողմից ներկայացված տվյալները և տեղեկությունները գործում հակառակի վերաբերյալ ապացույցների բացակայության դեպքում ընդունվում են որպես հավաստի: Ընդ որում, Հանձնաժողով կեղծ տվյալներ և տեղեկություններ ներկայացնելու համար վարույթով պատասխանողը կրում է պատասխանատվություն:

Տվյալ պարագայում Ընկերությունը թիվ 126-Ա որոշումը ստացել է 2026 թվականի ապրիլի 14-ին և Միջնորդությամբ խնդրել է կիրառել արագացված վարույթ՝ հայտնելով, որ ընդունում է Վարույթով իրեն վերագրվող իրավախախտման փաստը և վերացրել է իրավախախտման հետևանքները:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 88-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով, 42-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Տ

1. Թիվ ՀԳ-01943/26 վարույթով պատասխանող «Կվադրա-Իմպեքս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված արագացված վարույթ կիրառելու մասին միջնորդությունը բավարարել և կիրառել արագացված վարույթ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՆԱԽԱԳԱՀ **Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. մայիսի 19
Երևան